80Դ. 44. — Արուեստանոցի աշակերտուհեաց քննութիւնք վեցամսեայ եւ տարեկան են: Վեցամսեայ քննութիւնք, որք մասնաւոր պիտի ըլլան, կը կատարուին ի ներկայութեան Խնամակալութեան Թաղ. Խորհուրդոց եւ Խնամակալուհի Տիկնանց: Իսկ տարեկան քննութիւնք տեղի կունենան իւրաքանչիւր տարւոյ Յունիս ին, որոց կը հրաւիրուին Թաղ. Խորհուրդ, Ազգ. Կեդրոնական Վարչութեան Ռւումնական եւ Տընտեսական Խորհուրդներն, աշակերտուհեաց ծնողք, դրաէն փափաքողք, նոյնպէս եւ մասնագէտք: Սոյն քննութիւնք կը կատարուին թէ՛ աշակերտուհեաց արտադրած աշխատութեանց ի տես դրուելովն եւ թէ՛ հանդիսականաց աշքին առջեւ իրենց կատարելիք գործերովն:

Այս քննութեանց մէջ արժանաւոր հանդիսացող աշակերտուհիք երեք կարգի կը բաժնուին.

Միջակ

կաւ

Քաջալաւ, որք կը նշանակուին յատուկ տումարի մէջ:

Իւրաքանչիւր աշակերտուհի արուեստանոցի հնդամեայ շրջանն աւարտելէ վերջը աւարտականի քննութիւն տալով վկայական կը ընդունի, որուն մէջ կը նշանակուին իր աստածանը եւ իր մասնագիտութիւնը:

Սոյն վկայականները պիտի սոորագրուին Արուեստանոցի Տեսչին եւ Խնամակալութեան կողմանէ եւ պիտի վաւերանան Թաղ. Խորհուրդէ:

Ծրջանաւարտ աշակերտուհիք պարտին

երեք ամիս ձրի աշխատիլ Արուեստանոցին մէջ, եթէ թոշակաւոր իսկ են, եւ յետոյ ատանալ իրենց վկայականը:

Վերջին ՅՈՒՂԻԱՄՔ

80Դ. 45. — Բերայի իդական սեռի վարժարանաց Խնամակալուհի Տիկնանց կը պատկանի իրենց յարմար դատած եղանակաւ առօրեայ հսկողութիւն ի գործ դնել Արուեստանոցին վրայ, որպէս զի հոն յաճախող օրիսրդք ըստ ամենայնի բարի վարուց մէջ դաստիարակուին եւ յապազային պարկեշտ մայրեր լինելու պատրաստուին:

Արուեստանոցի Խնամակալութիւնն այս մասին հարկ եղած կարգադրութեանց եւ կանխահոգ գգուշութեանց վրայ յիշեալ Խնամակալուհի Տիկնանց հետ պիտի համաձայնի եւ ըստ այնու պիտի գործադրէ:

80Դ. 46. — Շարաթը մի անդամ Բերայի եկեղեցականաց դասէն կրօնական ժողովէ արտօնեալ եկեղեցական մը արուեստանոցին պահը մի ժամ պիտի խօսի Քրիստոնէականի եւ բարեյագիտութեան վրայ որոյ ունկնդըրութիւնն Արուեստանոցի բոլոր աշակերտուհեաց համար պարտաւորիչ է:

80Դ. 47. — Արուեստանոցը պարտի ունենալ իւր յատուկ բժիշկն որ շարաթն երկու անդամ պիտի այցելէ եւ աշխատելու անկարողներն պիտի տեղեկագրէ Տեսչութեան. նոյնպէս դեղարան մը սկզբնական կամ անմիջական դարմանաց համար, որք ձրիարար պիտի մատակարարուին ամեն աշակերտուհեաց՝ ի պահանջել հարկին:

80Դ. 48. — Հսկող տիկնայք նոյնպէս եւ Խնամակալութեան անդամք՝ առանց կանխաւ ազդարարութեան, կայցելն արուեստանոցն եւ իւրաքանչիւր ճիւղի վրայ հարկ տեսած տեղեկութիւններն կ'ստանան Տեսչութենէ:

80Դ. 49. — Արտաքին այցելուք պարտին նախ Խնամակալութեան դիմել եւ գրաւոր արտօնութիւն ստանալ ուղղեալ առևտութիւն:

Այցելուք ուղղակի որ եւ է խօսակցու-

թեան մէջ մոնելու իրաւունք չունին աշակերտուհեաց հետ:

80Դ. 50. — Յաճախորդաց կողմանէ Արուեստանոցին տրուելիք յանձնարարութիւնք Խնամակալութեան կողղուին:

Հ Ա Ս Ս Ա Ս Ե Ա Լ

Ի Խառն Ժողովոյ Ազգ. Կեդր. Վարչութեան

Վասն Ատենապետի Կրօն. Ժողովոյ Դեր-Ատենապետ ՀՄԱՅԱԿ ԵՊԱԿ. ԴԱՄԱԳՎԵԱՆ

Հրամայեալ ի գործադրութիւն

ՊԱՏԻԱՐՔ Կ. ՊՈՅԱՆՈ

ԸՆՐԱԿԱՐԴԻՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՎՈՍ

16 Յունվար 1887  
Ի Պատրիարքարանի Հայոց  
Կ. Պոյի

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՐԱԽԵԹԻՆ

### ԲԵՐՄՅՈՒ ԻԳԱԿԱՆ ՍԵՐԻ ԱՐԱԿԵՍԱՆՈՑԻ

ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԾ

#### ՊԱՇՃԵՆ

Առաջարկութեան Բերայի Եկեղեցական դասու և Թաղ. Խորհրդոյ ուղղեալ առ. Ազգ. Կեդրոնական Վարչութիւն:

—o—

Բերա, 18 Հոկտեմբեր 1886

Ամենապատիւ Տ. Տ. Յարութիւն Սրբազն Արքեպիսկոպոս Վեհապետեան, Պատրիարք Հայոց և Նախագահ Ազգային Կեդրոնական Վարչութեան:

Թաղական Խորհուրդու շատունց ի վեր Բերայի չքաւոր աղջկանց արհեստական դաստիարակութեանը նպաստող գործնական միջոցներ հայթայթելու մոտեիր կը դժուուէր, վասն զի լաւ հասկցած էր որ եթէ աղքատին ապրուստ ճարելու եղանակը չ'ցուցուի, ի քարոյական կորուստ կը դիմէ: Ահա այս նըկատութիւններէ մղուելով Թաղական Խորհուրդն իւր վերջին նստին մէջ սկզբանը ընդունեց աղջկանց աշխատանոցի մը հաստատութիւնը եւ որոշեց դիմել առ Զեր Յըրբարական Խորհուրդու եւ առ Ազգ. Կեդր. Վարչութիւն այս մասին արտօնութիւն ստանալու համար:

Սոյն աշխատանոցը Բերայի ազգային բարեգութ Տիկիններէ կազմեալ խնամակա-

լութեան մը ձեռօք պիտի մատակարարուի, որոյ ծրագիրն ի մօտոյ պիտի ներկայանայ Կեդրոնին առ ի վաւերացումն:

Այս առթիւ Թաղական Խորհուրդն՝ համախոհ թաղիս եկեղեցական դասուն հետ, որոշեց որ այն աշխատանոցի յատկանայ նախկին Նարեկեան Վարժարանի չէնքն, որ վերջին հրդեհին այրած ըլլալով, այս անգամ վերականգնուեցաւ:

Աւելորդ չեմք համարիր յայտարարել որ յիշեալ չէնքը Սուրբ Երրորդութեան եկեղեցւոյ շրջափակին մէջ դանուելով հանդերձ որ եւ է անպատեհութիւն չունի աշխատանոցի յատկանալու: Հետեւաբար պատիւ ունիմք դիմելու այսօր առ Զեր Բարձր Սըրբագնութիւն խնդրելով որ բարեհաճի ի նորոյ հաստատելի աշխատանոցի մասին իւր եւ Կեդրոնական Վարչութեան բարձր հաւանութիւնն հազրուել մեզ, որպէս զի կարելի լինի Թաղական Խորհուրդոյ՝ ժամ յառաջ ձեռնարկել բոլոր այն միջոցներուն որոնցմէ կակընկալուի նախնական ծախուց համար հարկ տեսնուած դրամը, առանց նոր բեռ մը դընելու թաղային նստուկի ելմտացուցին վրայ:

Մնամք խորին յարդանօք Քաղական Խորհրդոյ

Ատենապետ Քարոզի Բերայի  
Յ. Կ. ՆՈՒՐԵԱՆ Ներես Վ. Արսլանեան

Աւագերեց  
Գրիգոր քհյ. Անեմիան  
(Թաղական Խորհրդոյ)  
Կնիք

#### ՊԱՇՃԵՆ

Առաջին Պաշտօնագրոյ ազգ. Կեդրոնական Վարչութեան ի պատաժամանի Ենթայի Եկեղեցական դասու և Թաղական Խորհրդոյ առաջարկին:

—o—

#### ՊԱՇԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Թիւ 234

27 Նոյեմբեր 1886

Գերապատիւ Տ. Ներսէ Վ. Վարդապետ Արալիսեան Բարեխրատ Քարոզի, Արժանապատիւ Տ. Գրիգոր Աւագ Քահանայ Անկանան և Վահենապետ Էւենափ Թաղական Խորհրդոյ Բերայի:

Ստանալով ամոցոյ 18 թուականին Զեր ուղղած յայտագրին՝ փութացինք հազրուել Ազգ. Կեդր. Վարչութեան Խառն Փողովց, որ տեղեկացաւ թէ Պատ. Խորհուրդու Բերայի մէջ չքաւոր Հայ աղջկանց աշխատութեան եւ ապրուստի միջոց մ'ընծեռելու եւ զանանք բարյական անկումէ պահպանելու նպատակու՝ աշխատանոց մը հաստատելու խորհուրդն յդացեր եւ անոր պէտքը սկզբամը ընդունելով արժան դատեր է Նարեկեան Վարժարանի չէնքն սոյն աշխատանոցի յատկանալու եւ մատակարարել զայն Հայ Տիկնանց Խնամակալութեան մը ձեռօք, յատուկ ծրագրոյ մը համաձայն, զոր ունի մատուցանել Ազգ. Վարչութեան:

Խառն Փողովը ուշադրութեան առնլով խնդրին՝ գու եղաւ մեծապէս Թաղական Խորհուրդոյ սոյն բարեհամատակ կարգադրութենէն, որ օգտակար արդիւնքներ ունենալու սահմանուած է, եւ հաճութեամբ ընդունեց զայն, այնու պայմանագր որ աշխատանոցի հսկութիւնն եւ գործին բովանդակ պատաժամանառութիւնն Թաղ. Խորհուրդն ստանձնէ առաջի Ազգ. Կեդր. Վարչութեան, եւ պաշտոնական յարաբերու-

թիւնք այս մասին կատարուին ուղղակի անոր հետ:

Հետեւաբար կը մնայ այժմ Պատ. Խորհրդույդ սահմանել այն ամեն միջոցներն ուղցմով հնարին պիտի լինի աշխատանոցին պէտք եղած ծախուց գումարն հայթայթել եւ խստացեալ ծրագիրն յուղարկել մեզ, որպէս զի Խառն Ժողովոյ վաւերացման ներկայանայ եւ գործադրութիւնն որոշուի:

**Մնամք աղօթարար**  
ՊԱՇԻԱՐՔԱՐԱՆ Կ. ՊՈԼՍՈՑ  
**ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ**

#### ՊԱՇՃԵՆ

Տեղեկագրոյ Թաղ. Խորհրդոյ Բերայի հանդերձ Կանոնագրի ծրագրով ուղղեալ առ. Սպգ. Կեդր. Վարչութիւն:

—o—

#### ՊԱՇԱԿԱՆ ԽՈՐՃՐԴԱՐԱՆ

12 Յունիս 1887

Առ Ամենապատիւ Տ. Տ. Յարութիւն Սրբազն Արքեպիսկոպոս Վեհապետեան, Պատրիարք Հայոց և Նախագահ Ազգ. Կեդրոնական Վարչութիւն:

Նոյեմբեր 27 թուական եւ 234 թուական պաշտօնագրով Զեր Բարձր Սըրբագնութիւնը բարեհաճած էր ծանուցանել որ Ազգային Կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովը՝ ըստ մեր առաջարկի՝ սկզբամը ընդունելու է Բերայի Սուրբ Երրորդութիւն Եկեղեցւոյ յարակից չէնքն մէջ հայազգի աղջկանց համար Արքուեստանոցի մը հաստատութիւնը, նոյն առթիւ՝ Զեր Բարձր Սըրբագնութիւնն հրամայած էր ծրագրել թէ այն միջոցներն որպես պիտի լինի աշխատանոցի պէտք եղած ծախուց գումարը այս մասին կատարուին ուղղակի անոր հետ:

գումարն հայթայթել, եւ թէ՛ յիշեալ հատատութեան մատակարարութեան պայմաններն, որպէս զի այս մասին պատասխանատութիւնք եւ յարաբերութիւնք նախապէս լաւ ճշդուած լինին:

Արդ՝ պատիւ ունիմք այսօր ներփակեալ մատուցանելու առ Զեր Բարձր Սրբազնութիւն վերոյիշեալ Արուեստանոցի հիմնական կանոնագրոյ մի ծրագիրն որ Խորհրդոյս դիւանն մասնագիտաց օժանդակութեամբ պատրաստած լինելով, իւր երեկուան ընդհանուր նատին մէջ յօդուած առ յօդուած քննութեան ենթարկուելէ յետոյ միահամուռ քըւէով ընդունուած է:

Ինչպէս պիտի տեսնուի սոյն ծրագրի ընթերցումէն, Թաղական Խորհուրդն ներշնչելով նոյն իսկ այն մոտախոյութենէ զոր Ազգ Կեդր. Վարչութիւնն իրաւամբ ցուցած էր ի մասին պատասխանատութեան այս կարեւոր ձեռնարկի, յարմար դատած է որ նորակառոյց աշխատանոցի մատակարարութիւնն յանձնուի ուրոյն Խնամակալութեան մը՝ պատասխանատու հանդէպ Թաղական Խորհրդոյ եւ Կեդրոնի, եւ որոյ ընտրութիւնն ենթարկեալ պիտի մնայ Կեդրոնական Վարչութեան վաւերացման:

Աւելորդ շեմք համարիր սա կէան ալ նշմարել առ որ հիմնարկելի արուեստանոցն յարաւեւութեան եւ ապահովութեան պայմաններու մէջ պահելու համար, Խորհուրդս ուզած է նկատել զայն իր գործարան մը որ իր գրամագլուխ շահագործելու համար ամեն հաւասականութիւնք իւր մէջ պիտի պարունակէ եւ սոյն գործարանի զարգացումէն ու բարգաւաճումէն միայն պիտի բգլիքն այն մէծ օգուտներն որք իրաւամբ կակնկալուին հայագիր իդական սեռի վիճակին բարւոքմարը, Վերջապէս՝ Ազգն՝ այսօր եւ մի անգամու համար երկու միջոցով կը մասնակցի արուեստանոցի բացմանը. առաջինն է Բերայի թաղին շնչերէն մին ձրիաբար յատկացելով այդ արուեստանոցի, երկրորդ, արտօնե-

լով հազար երկու հարիւր ոտկոյ հանդանակութիւն մը որ Հանդանակիչ Մասնախմբի մը ձեռօք պիտի կատարուի:

Իսկ՝ գալով կանոնագրոյ միւս արամագրութեանց, ասոնք կը վերաբերին, ինչպէս պիտի տեսնուի, Արուեստանոցի մատակարարութեան եւ իր աշխատութեանց կանոնաւոր արդիւնաւորմանը, եւ հիմնուած են այս տեսակ ձեռնարկներու մէջ ստացուած փորձառութեան վրայ:

Խորհուրդս՝ իւր երէկուան նատին մէջ, ի ձեռին առնելով միանդամայն Արուեստանոցի Խնամակալութեան կազմութեան խնդիրը, միահամուած քույզով որոշեց առ Ազգային կեդրոնական Վարչութիւն ընտրելի ներկայի Խորհրդոյս Արտենապետ էֆէնտին, Ազնուացուք Գրիգոր էֆէնտի կերմիւշկերտան (որ յանձնառու եղած է գանձապետութեան պաշտօնը վարել), Մեծապատիւ Տիգրան էֆէնտի Տավուտեան եւ Կարսապետ էֆէնտի Բապուճճեան : Մօտ օրէն հինգերորդ անդամը պիտի ներկայացներու իւր այս չորս անձնոց կողմանէ :

Եւ որովհետեւ փափաքելի է որ յառաջկայ Մարտ Աին Արուեստանոցը բացուի, նկատելով միւս կողմանէ որ թէ՛ շնչերէն ներքին մասներն արուեստանոցի յարմար պայմաններու վերածելու գործը, եւ թէ՛ հարկ դատուած գործիքներու եւ մեքենաներու հայթայթումը բաւական ժամանակի կարու են, Խորհրդոյս որոշմամբ համարձակութիւն կ'առնումք խնդրել Զեր Բարձր Սրբազնութեան յանձնարարութեան համարկան մասին առ առ անկ է, որպէս զի սոյն ծրագրի եւ ընտրութեանց մասին հարկ եղած օրինական գործուղութիւնք կատարուելով, ժամ յառաջ ստանան Ազգ. Կեդրոնական Վարչութեան վաւերացումը, որպէս զի կարելի վնի հիմակուընէ նախապատրաստական գործոց ձեռնարկել:

Սոյն նպատակաւ Թաղական Խորհրդոյ կողմանէ կարգեալ Հանդանակիչ Մասնախմբումն արդէն աշխատիւ սկսած է հանդա-

Դակութեան կարեւոր գործն ի գլուխ հանելու համար :

Մնամք խորին յարգանօք  
Արտենապետ Արտենական  
Կարապետ Բապուճճեան Յ. Կ. Նուրեան  
(Թագուհին Խորհրդոյս)  
Կուհիք

## ՊԱՏԾԱԿ

Տեղեկագրոյ Ազգային Կեդր. Վարչուրեան Տնտեսական Խորհրդոյ:

— — —

## ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Թիւ 461 Կ. Պոլիս 15 Յունիար 1887

Ամենապատիւ Սրբազն Պատրիարք Հայր Նախազան Պատուի. Կեդր. Վարչուրեան կողմանէ :

Զեր Բարձր Սրբազնութեան յանձնարարութեան համեմատ Տնտեսական Խորհրդուրդս ու շագրութեան առաւ Բերայի Պատուարժան Թաղական Խորհրդոյ ամսոյս 42 թուականաւ տեղեկադիրն՝ եւ ընդ նմին նոյն թաղին մէջ Հայ աղջկանց համար հաստատելիք եւ մասնակալութեան պատրաստական անցնելէ յետոյ Խնամակալութեան եւ թաղական Խորհրդոյ միահամուռ ստորագրութեամբ ներկայանայ Տնտեսական Խորհրդոյ, ինչպէս նաև տարեկան հաշուեցոյն:

Ազգային Վարչութեան Տնտեսական Խորհրդս այս հաստատութեան մասին՝ որ ամեն տեսակառու անհրաժեշտ էր մեր ազգին Պոլսերնակ խուկան սեռին համար, թէ՛ իր պատուար մ'ընդդէմ նորաձեւութեան առթած առելորդ ծախուց եւ թէ իր նախադուռն առտնին առտեսութեան, Բերայի Պատուարժան Թաղական Խորհրդոյ հեռաւես հոգածութիւնը, նուիրած ջանքերն եւ ինքնայրդորդոր ստանձնած այս ամենակարեւոր այլ ծանրատաղութիւնը ծանրատաղութիւնը գոկութեամբ գնահատելէ յետոյ՝ միշեալ գոկութեամբ կատարելով հանդերձ չի պատկանի իւր համար կամաց իր պատուարժանի անոր ծրագրով կ'պատի:

Արդ՝ Տնտեսական Խորհրդոյ յիշեալ ծրագրին վրայ ունեցած իւր վերոյիշեալ երեք գիտութեամբ գնահատելէ յետոյ մասնական պատկան իւր համարնիր իւր ձեռնարկական պատկան այս հաս-

տատութեան ծնունդ տուող գաղափարին վրայ, եւ անկարեւոր չհամարիր այս առթիւ իւր ունեցած ինչ ինչ խորհրդածութեանց արդիւնքը ներկայել Զեր Բարձր Սրբազնութեան:

Ա. Ըստ որում սոյն հաստատութիւնը բնութեամբ եւ նպատակաւ մի եւ նոյն է Սովելոց Յանձնաժողովոյ թողած դրամագլուխի հասոյթով բացուելիք արհեստանոցին, Տընտեսական Խորհուրդս այդ դրամագլուխի հասոյթն հարիւր Օսմ. ոսկեոյ հասնելէ յետոյ՝ անկէ ինչ եւ է մաս մը յիշեալ հաստատութեան բաժին սահմանելու գաղափարը կը տածէ:

Բ. Աղջկանց արուեստանոցի նախապատրաստական ծախուց հայթայթման համար որոշեալ 1,200 ոսկեոյ հանգանակութիւնը 1,500 ոսկեոյ քանակութեամբ կատարել բանաւոր կը դատէ, սպայմանաւ որ այդ յաւելի 300 ոսկին ի պահեստի եւ յաւանդ մնայ Թաղական Խորհրդոյ արկղին մէջ, այժմէն աննախատեսելի ծախուց դիմադրիւր համար՝ Աղջային Կեդրոնական Վարչութենէն արտօնուելէն յետոյ:


Սոյն կարեւոր հաստատութեան ծնունդ տուող Պատուարժան Թաղական Խորհուրդն ըստ որում զի՞ողութիւն մ'ալ կատարել կուտայ Թաղային սնտուկին՝ իւր Կալուածներէն մին արուեստանոցի յատկացնելով, եւ կը զիկուի ընդ միշտ անոր եկամուտէն, եւ զի յիշեալ հաստատութիւնն իւր կանոնագրին սպահանջմամբ մինչեւ աստիճան մը Կեդրոնական արհեստանոց ըլլալով, սորա մատուցանելիք ծառայութիւնն իւր Թաղին մէջ սահմանակարւած չէ, հետեւաբար այդ զոհողութեան չափ մը տրուած ըլլալու, Թաղային կալուած մը իւր Եկեղեցոյն բազմազան պիտոյից հանդէպ անհասոյթ չ'թողելու եւ յապագային նորակազմ Թաղական Խորհրդոց եւ Խնամակարւութեանց միջեւ վարձուց առթիւ խնդրոյ նիւթ չ'գոյանալու համար իրաւացի կը համարի յիշեալ հաստատութեան չէնքին համար տարեկան չափաւոր վարձ մը

որոշուիլն, որ առ այժմ տարուէ տարի կը պարտք նշանակուի արուեստանոցին տումարաց մէջ՝ յառաջիկային արուեստանոցի արդիւնաւոր տարեաց հասոյթէն վճարուելու պայմանաւ, եւ պահանջ մը թաղ. տումարաց մէջ, ուստի այս խմաստով յօդուած մը կարենալ յաւելցուիլը կը յիշեցնէ:

Մնամք որդիական յարդանօք ի դիմաց Ազգ. Տնտեսական Խորհրդոյ Վատն Ատենադպրի Վատն Ատենադպեան Եղիսաբեր Մելիքեան Լ. Փափազնաւ

(Տնտե. Խորհրդոյ)

Կանք



## Պ Ա Տ Ճ Է Ն

Պատրիարքուկան Կոնդակի վատն հաստատութեան ենթայի իգական սեռի արուեստանոցին:

— • —

### ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Թիւ 259 Կոստանդնուպոլիս

Վանմափայլ Ատենապետ Էֆեսուի Թաղ. Խորհրդոյ ենթայի.

Ազգ. Կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովն՝ իւր երէկի նստին մէջ, ուշադրութեան առաջ Պատուարժան Խորհրդոյդ Կողմէ ամսոյս 12 թուականաւ ուղղեալ գրութիւնն եւ յարակից կանոնագրոյ ծրագիրն, որ կը վերաբերին Բերայի մէջ հաստատելի իգական սեռի Արուեստանոցի խնդրոյն, ինչպէս նաև Տնտեսական Խորհրդոյ այս մասին մատուցած տեղեկագրոյ եղրակացութիւններն:

Արդ, ինչպէս նոյեմբեր 27 թուականաւ պաշտօնագրով ծանուցուած էր Զեղ, Խառն Ժողովն նախորդ որոշմամբ յարմար դատած էր որ այդ Արուեստանոց՝ թէպէտեւ իրմէ

ակնկալեալ արդեամբն ընդհանուր կերպի Հայ իգական սեռի վիճակին բարուոքման աստարելու սահմանեալ, այսու ամենայնիւ մատարաբարութեան եւ համարատութեան մասին գտնուի միշտ Խորհրդոյդ պատասխանատութեան ներքեւ, իր մին Բերայի կրթական հաստատութեանց, եւ, ըստ այնմ, Խնամակալութիւնն լինի ուղղակի համարատու առ թաղական Խորհրդոյն եւ անոր միջոցաւ առ կեդրոնական Վարչութիւնն օրինաց սահմանին մէջ, հետեւաբար սոյն հիման եւ Տնտեսական Խորհրդոյ եղրակացութեանց վրայ, նոյն ծրագրոյն մէջ հարկ եղած սրբագրութիւններն կաստարուելն եւ ուրիշ քանի մը կէտերու մասին ինչ ինչ բարեփոխումներ սահմանուելէ յետոյ Խառն Ժողովն ընդդուեալ վերաբերեալ ներքեւ արարուական եւ նիւթական վիճակին բարուոքման սահմանեալ այդ օգտակար հաստատութիւն կարենայ արտադրել ակնկալեալ օգուտն:

Աւելըրդ չեմք համարիր յանձնարաբել նաեւ Պատուարժան Խորհրդոյդ որ համի ընտրել ընդհուպ Արուեստանոցի Խնամակալութեան Խորհրդոյդ կողմէ ընտրեալ չորս անդամներն, որք են

- |                               |                |                 |
|-------------------------------|----------------|-----------------|
| 1. Վաեմ. Յովհաննես էֆ. Նորեան | 2. Ազգ. Գրիգոր | » Կիւմիւշկերտան |
| 3. » Տիգրան                   | » Տավուտեան    |                 |
| 4. » Կորապետ                  | » Փապուճեան    |                 |

Մնամք աղօթարար  
ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՈԼՍՈՅ  
ՅՈՒՐՈՒԹԻՒՆ ԱՐՄԵՊԵՊԱԿՈՂՈՅՈՒ

## ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՄԱՐԱՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՓՈԽԱՆՈՐԴԱՐԱՆԻ

ԵՒ

## ԴԱՏԱՍՍԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅՑ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

1885.87 Ա.ՄԴ



Բարձրաշնորհ Սրբազն Պատրիարք Հայր՝  
Նախագահ Ազգային Կեդրոնական Պատոկ Վարչութեան.

Քաղաքական Պատկառելի ժողովոյ Վը-  
ուեմաշուք Ասենապետ էֆենտի յանձնարա-  
րութեան համաձայն՝ խոնարհաբար կը ներ-  
կայացնեմ Ձեր Բարձր Սրբազնութեան 1885  
Նոյեմբեր 15-ի մինչ ի թուական Տեղեկագրոյն  
Փոխանորդարանին ներկայացեալ խնդրոց վի-  
ճակագրութիւնն ի գիտութիւն.

Ի վեր անդր նշանակեալ ժամանակամի-  
ջոցի մէջ ներկայացած են Փոխանորդարանին  
1772 խնդիրք, որոց տեսակներն են, 1<sup>0</sup>, Ա-  
մուսնական. 2<sup>0</sup>, Բազմամեայ պանդուխտ  
գաւառացի պղպայնոց ի հայրենիա առ ան-  
խնամ ընտանիս վերադարձուցման պատկան-  
եալ յանձնարարութիւնք. 3<sup>0</sup>, Պանդուխտ  
Բահանայից ի Մայրաքաղաքի կամ այլ ուր  
պաշտօնի գրուելու կամ ի հայրենիս վերա-  
դարձուցմանելու վերաբերեալ յանձնարարու-  
թիւնք. 4<sup>0</sup>, Պոլսեցի եւ գաւառացի որբոց,  
յիմարաց, հիւանդաց եւ անկելոց յԱզգային  
Հիւանդանոցի պատսպարուելու խնդիրներ.  
5<sup>0</sup>, Թաղային խնդիրներ. 6<sup>0</sup>, Նշանագրա-  
կան եւ նշանաշնչական խնդիրք. 7<sup>0</sup>, Անհա-  
տականք այլ եւ այլ տեսակօք. 8<sup>0</sup>, Տնան-  
կաց, աղքատաց եւ կարօտելոց խնդիրք.  
9<sup>0</sup>, Այլ եւ այլ յանձնարարութիւնք, եւ 10<sup>0</sup>,

Վկայագրոց եւ վաւերացմանց եւ այլն, խըն-  
դիրներ:

Սոյն խնդիրներէն այն ամենքն՝ որք Փո-  
խանորդարանիս իրաւասութեան եւ ձեռնհա-  
սութեան սահմանին մէջ արդարութեամբ  
իրաւամբ եւ օրինօք, կամ, իրաւախուն-  
թեամբ, հաշտութեամբ եւ պատշաճական  
կարգագրութեամբ վերջանալու հանգամա-  
նաց մէջ մոնելու տրամադրութեան տակ  
գտնուած են, մեծապէս ջան փոյթ ու խը-  
նամ տարուած է զայնս վերջացնելու. իսկ  
անհնք որք տարուած ջանից, փութոց եւ  
խնամաց հակառակ հանգամանաց եւ պարա-  
գայից մէջ գտնուած են, որպիսիք եղած են  
87 այլ եւ այլ խնդիրք, յլուած ևն Դատաս-  
տանական Խորհրդոց:

Այս յլուած խնդիրներէն 58ը՝ ամուս-  
նական, 6ը՝ կուսապղծական, 6ը՝ նշանաշն-  
չական, 5ը՝ ժառանգորդական, 3ը՝ ներքի-  
նելութեան եւ 9ը՝ հողային, պահանջից եւ  
այլ խնդրոց պատկանեալ են:

Ամուսնական խնդիրներէն 42ը՝ հաշտու-  
թեամբ վերջացած է. 13ը՝ առ որ անկն է՝  
տեղեկագրուած. իսկ 33ը՝ տակաւին առ կամ  
վիճակի մէջ են, որ մէկը՝ խնդրոց տէրերուն

չգալուն եւ որ մէկը՝ գեռ եւս քննութեան ենթակայ լինելուն պատճառու:

Կուսապղծական խնդիրներէն Յը՝ ամուսնութեամբ փակուած, Զը՝ առ կախ մնացած եւ Աը՝ աեղեկագրուած է:

Նշանաշնջական խնդրոց նն ալ նշանաց ջնջմամբ վերջացած են:

Ժառանդորդական կամ ժառանդական խնդիրներէն Յը՝ աեղեկագրուած եւ Զը՝ առ կախ մնացած են:

Եերքինիութեան խնդրոց ամենքն ալ աեղեկագրուած են՝ առ որս պատկանեալքն են:

Իսկ միս այլ եւ այլ խնդրոց մի քանին աեղեկագրուած, մի քանին փակուած եւ մի քանին գեռ եւս առ կախ կը մնան ի քընութիւն:

Դալով նշանադրութեան Դիւանի վիճակագրութեամ՝ արձանագիրք ցոյց տուած են թէ 1885 նոյեմբեր 25ն եւ այս 724 նշանադրութիւնք կասարուած են. յորոց 527ն պատկած, 13ը ջնջուած եւ 144ը՝ գեռ եւս պատկած չեն:

Պանդուստ Քահանաներէն 22ի չափն վերագրծուցած եմք իրենց հայրենիքն. բայց տակաւին տուաւել քան զքսան եւ հինդ կը գտնուին Մայրաքաղաքի մէջ եւ արուարձանները:

Իսկ պանդուստ ազգայնոց վերագրցուցման մասին գժբաղդաբար գոհացուցիչ տեղեկութիւններ չպիտի կարեմք տալ. վասն զի երկար ժամանակեայ պանդիստութիւնն այնպէս կարծրացուցած է պանդիստելոց սրբառն, որ ապառած քար դարձած են եւ

իրենց կանանց եւ զաւակաց սրտաճմլիկ թըշւառութիւն եւ ազլողորմ վիճակ, Առաջնորդաց եւ Թաւառական Վարչութեանց աղեկը տուր նկարագրութիւնք եւ մեր կողմանէ անխնայ կարդացուած յորդորանք, խրատք, սաստք եւ յանդիմանութիւնք անզօր կը մնան. եւ ցաւալի է ըսել թէ 5 % հազիւութիւնն ցայցութիւն ցոյց կուտայ իւր մեռելատիպ անզդայութեան մէջ: Հստ մեր խոնարհ կարծեաց՝ հարկ անհրաժեշտ է այս սոսկալի իրացութեան գէմ ազդու միջոց մը, դարման մը մասծել, զի ինչպէս Զեր Բարձր Սրբազնութիւնն ալ քաջ գիտէ, հետեւանքն ազետարեր է: Առաջնորդք զայս հաստատած են ու կը հաստատեն՝ աեղեկագրելով այդպիսաց կանանց հաւատուրացութիւններն, կրկնամուսնութիւններն, անբարոյական կենաց մէջ գլորանքներն:

Զայսոսիկ այսովէս համառօտակի վիճակագրելով՝ միանդամայն արդարութեան քաջցը պարտաւորութիւն կը համարիմ Զեր Բարձր Սրբազնութեան առջեւ դնել խորին գոհունակութիւնն վասն Սրբանապատիւ Քահանայ եւ Մեծապատիւ Աշխարհիկ անդամոց Դատաստանական Խորհրդոյ, որք ազդասիրական գովելի ևռանդեամք եւ ջանիւք եւ գործակցութեամբ վայելչապէս տարին ի ըսկըդրանէ եւ այսր իրենց տուանձնած ծանր ու փափուկ պաշտօնն, եւ արժանի իսկ են Զեր Բարձր Սրբազնութեան համալրանաց, գոհունակութեան եւ օրհնութեանց ի քաջալերութիւն նոցին յառաւելու յազգասիրական զգացմունս, 'ի խորհուրդս, 'ի ջանս եւ ի գործս:

Մնամ Բարձր Սրբազնութեան Զերոյ Ամենախոնարհ որդի Պատր. Փոխանորդ եւ Նախապահ Դատաստան Գէորգ ՎՐԴ. Իհթիհանս

Պատրիարքարան Հայոց  
կ. Պօլիս  
25 Օունիս 1887

## ՀԱՄԱՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Ա. Զ Ա Ց Ի Ն Կ Ե Ա Կ Ա Ն Վ Ա Ր Չ Ո Ւ Թ Ե Ա Ն

## ՈՒՍՏՈՒՄՆԱԿԱՆ ԽԱՐՀԱԳՐՈՒՅԹ

1885. Տ Ա Մ Ի Ռ

Ա. Բ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Պ Ա Տ Կ ։ Ժ Ո Ղ Ո Վ Ն

Ա. Զ Գ Ա Ց Ի Ն Կ Ե Ա Կ Ա Ն Վ Ա Ր Չ Ո Ւ Թ Ե Ա Ն

Ամենապատիւ Սրբազն Պատրիարք Հայոց

Նախադահ Քաղաքական Պատկ. Փողովոյ Աղային Կեդր. Վարչութեան.

Ազգային կեդրոնական Վարչութեան Ուսումնական Խորհուրդս Պատկ. Փողովոյ ընտրութեամբն եւ Բարձրաշնորհ Սրբազնութեանդ հրաւիրանօք 1885 Սեպտեմբեր 11ին պաշտօնի ձեռնարկեց, ոչ այնքան իւր արժանիութիւնն վասն Սրբանապատիւ Քահանայ եւ Մեծապատիւ Աշխարհիկ անդամոց Դատաստանական Խորհրդոյ, որք ազդասիրական գովելի ևռանդեամք եւ ջանիւք եւ գործակցութեամբ վայելչապէս տարին ի ըսկըդրանէ եւ այսր իրենց տուանձնած ծանր ու փափուկ պաշտօնն, եւ արժանի իսկ են Զեր Բարձր Սրբազնութեան համալրանաց, գոհունակութեան եւ օրհնութեանց ի քաջալերութիւն նոցին յառաւելու յազգասիրական զգացմունս, 'ի խորհուրդս, 'ի ջանս եւ ի գործս:

Խորհուրդս իւր ստանձնած պաշտօնը խղմի մտօք կատարելու համար իւր առաջին գործն ըրաւ Մայրաքաղաքիս Ազգային Վարժարանաց վիճակը խնամու քննել, եւ ցաւօք սրտի տեսաւ որ՝ նոքա քիչ բացառութեամբ անփորձ եւ անձեռնհաս անձանց քմահաճոյիցն ենթակայ եղած, կանոնաւոր եւ միորինակ ուղղութենէ զուրկ էին, որով գրեթէ յումպէտ կը վասնուէին անոնց մատակարարական Հրահանդն, մինչեւ որ Պատկ. Խորհուրդս յատկացեալ դրամը, ինչպէս նաեւ Ազգային մանկառոյն թանկագին տարիներն, եւ որ առաւել ցաւալին է, շատ թաղերու մէջ ալ խոռվութիւնք եւ երկապառակութիւնք անպակաս էին ընդ մէջ Թաղական Խորհրդոց եւ Հոգաբարձութեանց, եւ նկատելով որ Ուսումնական Խորհրդոյ պաշտօնի մասին Սահմանադրութեան 45դ. յօդուածոյ տրամադրութիւնք մեռեալ տառեր եղած էին եւ հետեւաբար Խորհրդոյս պաշտօնն ու ի-

Մայրաքաղաքիս մէջ 56 Թաղային վար-

ժարանք կան, արու եւ էդ մանկանց, գրեթէ ամենն ալ նախակրթական վիճակի մէջ, որոց համար տարեկան 1,100,000 դրչի գումար մը կը ծախտուի, մեծ մասը թաղային սնտուկներէն եւ մէկ մասն ալ աշակերտաց թոշակներէ եւ զանազան նուերներէ հայթայթեալ, առանց սակայն ազգին բաղձանացն եւ պիտոյից արժանապէս համապատասխանող արդիւնք մը յառաջ բերելու. մանկանց նախական կրթութիւնը շատ տեղի գրեթէ բոլորովն բարձի թողի եղած, ամենէն աշխատ թաղն իւր կարողութենէն վեր ծախք ընելու կը նկրտի զանազան լեզուաց եւ անուանական գիտութեանց ուսուցման յուսով, եւ դրացի թաղերու վարժարանաց հետ անտեղի եւ թիւրիմաց մըրցումներ հաստատելու խորհրդով։ Խորհուրդը վրա վարժարանաց բարեկարգութեան Հրահանգն եւ նորա յարակից ուսմանց բաժանման աղիւսակն հրատարակուելէ վերջ՝ թէեւ Տնտեսական Խորհրդոյ։ Խորհուրդ Սայրաքաղաքիս ուսուցչական մարմինն ներկայանալիշեալ Մասնակիրն եւ յետ օրինական քննութեան վկայական ստանալ ըստ իւրաքանչիւր կարողութեան եւ արժանեաց։ Սոյն կարգադրութեան համաձայն մինչեւ ցարդ վկայական ստացած են 107 ուսուցիչք եւ Դաստիարակք, 5է առաջնակարգ 30 երկրորդակարգ եւ 23 երրորդակարգ։

Խորհուրդը միանդ ամսոյն յանձնաբարեց իւր Օժանդակ Մասնախոմին Կրթական Պաշտօնէից վկայականի ստորագրուն ըստ արժանեաց բարձրացման վերաբերեալ կանոնի թաղ։ Խորհուրդը պարտաւոր են իրենց ընդհանուր ելմտացոյցէն թաղային վարժարանաց մատակարարութեան յատկացեալ մասը զատելով ուրոյն հաշուեցուցով մը ներկայել Ազգային Կեղծոնական Վարչութեան, Պատկառելի ժողովոյդ՝ որոշմամբ վարժարանաց աստիճաններու բաժանումն յառաջիկայ Դարոցական տարեգլուխն վերապահեց։ Այս կարգէն դուրս կը գտնուին Դատը-Գիւղի Արամեան եւ Գում-Դափուի Պէզնեան Մայր վարժարաններն, որք իրենց կիւթական կարողութեամբ եւ տեղական կարեւութեամբ յարմարութիւն ունին ուսումնարան լինելու, ինչպէս արդէն ձեռնարկը է Գում-Գիւղի Պումանական գումարի մը լցնելու համար վարժապետանոցի մը,

ժարանն գրացի թաղերու վարժարանաց հետ միացմամբ բարձրագոյն ուսումնարանի վերածել։ Աչ նուազ նկատողութեան արժանի էր նաեւ ուսուցչական մարմնոյն վիճակը։ Մայրաքաղաքիս թաղային վարժարանաց մէջ 220ի չափ ուսուցիչք եւ դասախարակք պաշտօն կը վարդէն, որոց կարողութեան աստիճաններն ճշգուած չինելով արժանաւորք գրեթէ մեծ մասամբ զրկուած էին պէտք եղած քաջալերութենէ եւ հոգածութենէ եւ վարժարանաց Տեսչութիւնը անկարող եղած էին իրենց ընտրութիւններն կատարել յաջողակէս։ Խորհուրդս իւր պաշտօնի կողուելէն անմիջապէս վերջ ի նկատ առնլով զայս վիճակ, Պատկառելի ժողովոյդ՝ հաւանութեամբ Օժանդակ Մասնախումը մը կազմեց եւ հրաւիրեց Մայրաքաղաքիս ուսուցչական մարմինն ներկայանալիշեալ Մասնակիրն եւ յետ օրինական քննութեան վկայական ստանալ ըստ իւրաքանչիւր կարողութեան կամաց մինչեւ մը նորա միջոցաւ ընտրելով վարժարանի 42 ձեռնհաս մասնակէտներէ բաղկացեալ Քննիչ Յանձնախումը մը կազմել եւ նորա միջոցաւ ընտրելով վարժարանաց մէջ գործածնելի դասագրքերն մէկ դպրոցական շրջանի համար, տեղեկադրեց Պատկառելի ժողովոյդ, աղատ ասպարէդ թողավոր հեղինակաց եւ հրատարակչաց հետը գնագույն դասագրքեր յօրինելու յաջորդ դպրոցական շրջաններուն համար։

Թաղային վարժարանաց բարեկարգութեան հակար հաստատեալ Հրահանգին, ինչպէս նաեւ Խորհրդոյն ըրած մնօրէնութեանց եւ որոշմանց ճշգիւ եւ կանոնաւորապէս գործադրութիւնը յատուկ պաշտօնէից եւ մասնաւորապէս ձեռնհաս կրթական Տեսչի մը պէտք ունէր, պէտք մը զօր Սահմանադրութեան հաստատութեանին ի վեր պաշտօն վարչութեան մատեն Ուսումն Խորհուրդը զգացած եւ սակայն չին կրցած ընուլ, վասն զի Ազգային կը նշանակէ այն ամեն ինդիբներն, որովք զգացած է իւր երկամեայ պաշտօնավորութիւնն աղիւսակիւն չէին։ Խորհուրդը բարագնութեան եւ Պատկառելի ժողովոյդ յարատեւ հոգածութեան եւ աջակցութեան եւ այս մէծ արիտուր մ'է իւր աշխատութեան։

Ուսումնական Խորհուրդս վերջացնելով իւր համարատութեան տեղեկագիրն, ի ըստորեւ կը նշանակէ այն ամեն ինդիբներն, որովք զգացած է իւր երկամեայ շրջանի եօթանասուն երկու նստերուն մէջ, եւ որք օրինաւորապէս նշանակեալ են իւր արձանագրութեան տումարին մէջ։

◆◆◆

## ՑՈՒՑԱԿ ԽՆԴՐՈՑ

1. — Սահման իրաւասութեան Ուսումն. Խորհրդոց ընդ Թաղ. Խորհուրդո.
2. — Սահման իրաւասութեան Ուսումն. Խորհրդոց ընդ Գաւառ. Վարչութիւնս.
3. — Ընտրութիւն Գաւառական Ուսումնական Խորհրդոց.
4. — Ընտրութիւն Օժանդակ Մասնակըմի.
5. — Սահման իրաւասութեան Օժանդակ Մասնակիմի.
6. — Կրթական Տեսչի Ընտրութիւն.
7. — Ընտրութիւն Հոգաբարձութեանց Քաղաքային վարժարանաց.
8. — Հրաժարում Հոգաբարձութեանց.
9. — Անհամաճայնութիւնք ընդ Աչ Թաղական Խորհրդոց եւ Հոգաբարձութեանց ումանց.
10. — Բողոքք ընդ դէմ Հոգաբարձութեանց ումանց.
11. — Թաղական Խորհրդոց եւ Հոգաբարձութեանց ումանց միջեւ կնքեալ պայմանագիրք.
12. — Այցելութիւնք յԱզգային վարժարանս Մայրաքաղաքիս.
13. — Հասարակաց Կրթութեան կողմէ ոչ-Մահմէտական վարժարանաց համար ընտրեալ Վսեմ. Քննչաց յԱզգային վարժարանս այցելութեան խնդիր.
14. — Վիճակագրութիւն Ազգային վարժարանաց.
15. — Գաւառական Ազգային վարժարանաց բարեկարգութեան խնդիր.
16. — Մայրաքաղաքիս Թաղային վարժարանաց հոկողութեան խնդիր.
17. — Մայրաքաղաքիս Թաղային վարժարանաց ումանց Տնօրէններու ընտրութիւն.
18. — Վիճակագրութիւն Կրթական պաշտօնէից.
19. — Ուսուցչական վկայագիրք.
20. — Ուսուցչական մարմնոյ երիցագոյն անդամակցութեան վկայագրի խնդիր.
21. — Կրթական պաշտօնէից վիճակի բարոքման խնդիր.
22. — Կրթական պաշտօնէից ապագայն ապահովելու խնդիր.
23. — Կրթական պաշտօնէից թռչակաց աստիճաններու բաժանման խնդիր.
24. — Կրթական պաշտօնէից նպաստից խնդիր.
25. — Կրթական պաշտօնէից պահանջից խնդիր.
26. — Պաշտօն խնդրով վարժապետաց խնդիր.
27. — Գաւառներէ խնդրուած ուսուցչաց խնդիր.
28. — Բարեկարգութեան Հրահանդ Թաղային վարժարանաց Մայրաքաղաքիս.
29. — Աղիւսակ գասական բաժանմանց թաղային նախակրթարանաց.
30. — Գաւառական վարժարանաց ումանց ուսմանց յայտագրի վաւերացման խնդիր.
31. — Գասագրոց ումանց վաւերացման խնդիր.
32. — Աղդ. վարժարանաց միջ գործածելի գասագրոց ընտրութեան խնդիր.
33. — Գաստիարակութեան ելմուցոյցի խնդիր.
34. — Գասագրոց եւ ուսուցչական վկայագրոց վաւերացման տրոց խնդիր.
35. — Կրթունական Վարժարանի բացման խնդիր.
36. — Ուսումնական կաճառի հաստատութեան խնդիր.
37. — Ազգային Մատենադարանի բարգաւաճման խնդիր.
38. — Ղըլլարցի Աղա Յովսէփի Իզմիրեանցի կտակի խնդիր.

39. —Պ. Դ. Գալանթարեանցի հրապարակութիւնն Մանկավարժական ճիւղին փրայ .

40. —Կրթական Ընկերութեանց կանոնագրոց վաւերացման խնդիր .

41. —Կրթական Ընկերութեանց ուսմաց ընթացից դէմ տրուած բողոքանաց խնդիր .

42. —Միացեալ Ընկերութեանց Գաւառ վարժարանց խնդիր .

43. —Կուրակնօրեայ դասակարգութեանց խնդիր .

44. —Կրօնական Ժողովոյ յանձնարարութիւնք վերաբերմամբ Պալատու Հոգարարձութեան , եւ Ցերպի եւ Ռոտոսթոյի Վարժարանաց Տեսչութեանց .

45. —Կրօնական Ժողովոյ շրջարականն Կրթական պաշտօնից կրօնական եւ բարոյական հանդամանաց մասին .

46. —Կրօնական Ժողովոյ յանձնարարութիւնն կրօնական դասագրոց մասին .

47. —Պօլոյ Ահմէտիկ թաղի վարժարանին մատակարարութեան խնդիր .

48. —Պէօլիւքտէրէի, Սարըեար. Եէնի մաշտուքի երկու մասնաւոր վարժարանաց խնդիր .

49. —Ռուբինեան Տ. Արքուսիոս Վարժավետի ի Ցերպա հաստատած մասնաւոր վարժարանի խնդիր .

50. —Ցերպի Սահէնեան մասնաւոր վարժարանի խնդիր .

51. —Դալաթիոյ Թաղային վարժարանի շնութեան խնդիր .

52. —Դալրուցան աշակերտաց ամսակարգութեան կարգադրութեան խնդիր .

Մնամք Բարձրաշնորհ Սրբալնութեան Զերում  
Աղջական Աղջական Ուսումնական Խորհրդոյ  
Սզգային Կեդր. Վարչութեան Ուսումնական Խորհրդոյ  
Անհանդպիր Անհանդպիր

1 Ցուլիս 1887 Կ. Պոլս

53. —Միայեալ Ընկերութեան ի նպաստ հրատարակեալ դասագրոց խնդիր .

54. —Դասաւագան ոմանց ընթացքն ընդդէմ Ուսումնական Խորհրդոյ .

55. —Թաղական Խորհրդոց ոմանց ընթացքն հակառակ բարեկարգութեան Հրահանդիր .

56. —Գումարական Եէնի-Գավիուի եւ Կէտիկ-Փաշայի չորից Թաղից վարժարանաց միացման խնդիր .

57. —Գումարական Պէղճեան-Մայր եւ Գատը-Գիւղի Արամեան վարժարաններն բարձրագոյն ուսումնարանի վերածելու խընդիր .

58. —Դալրուցան մէջ տեղի ունեցած զանազան հանդիսից խնդիր .

59. —Դալրուցան ամավերջի քննութեանց խնդիր .

60. —Պօլսէն ի դաւառս դացող վարժապետաց անյագրի խնդիր .

61. —Պօլսէն ի դաւառս յղուած դասագրոց մաքսարարոց խնդիր .

62. —Տիւղէնձեան Նշան Էֆէնափի գործնական Համարակալութեան խնդիր .

63. —Տաղաւարեան Նազարէթ Էֆէնտիփի բնական պատմութեան խնդիր .

64. —Վարժուհեաց ձեւարուեստի մասին Պ. Դ. Գալանթարեանց էֆէնտիփի խնդիր .

65. —Սյազգեան Արքահամ էֆէնտիփի էջմիածին տարած աշակերտաց խնդիր .

66. —Երէցեան Պ. Կարազեալ բարյաց կանին դէմ յարուցուած ամրաստանութեան խնդիր :

Ե. Կ. ՃԵՆԱՋԵՍՆ

## ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀԱՄԱՐԱՑՈՒԹԵԱՆ

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ

ԱԶԳՈՅՑԻ ԿԵԴՐ. ԱՐՄԵԴԱՅԻԹԵԱՆ

1 885.87 Մ.Մ.Ի

Ամենապատիւ Սրբալն Պատրիարք Հայր  
Նախագահ Քաղաք. Պատկ. Ժողովոյ Ազգ. Կեդր. Վարչութեան .

Պատկ. Ժողովոյդ յանձնարարութեանն համեմատ Տնտեսական Խորհուրդս կը փութայ կատարել իւր գործառնութեանց համարատուութիւնը :

Տնտեսական Խորհուրդս 1885 Սեպտեմբեր ամսոյ 5ին ձեռնորկելով պաշտօնի մինչև 1887 Յունիս ամսոյ վերջ ԶԵ. Նիստեր ունեցած եւ 412 խնդիրներով կրողած է թէեւ, սակայն մասամբ զորք վիճելով հանրական կարեւորութենէ՝ արժան հօմարեց ցուցակաւ մը լծորդել տեղեկագրոյս եւ մասամբ անկարեւոր՝ ի բաց թողաւ ըուլորովին, իսկ անոնք որ արժանի են կարեւորութեան՝ համառած բացարութեամբ տեղեկագրել Պատկ. Ժողովոյդ :

1. Ազգային սեպհականութիւնն .— Ի վաղուց հետէ խնդիր է թէ, ազգային սեպհականութիւնք զորք են ապահովութենէ եւ արժանի է հիմնապէս ապահովել զանոնք, եւ շատ անգամներ խորհրդածութեանց առարկայ եղած եւ միջոցներ մտածուած կամ ձեռք առնուած են թէեւ, սակայն գժուարութեանց առջեւ արդիւնք մ'ունեցած չեն :

Ա. Անհրաժեշտ է ազգային կալուած ներկան ու սպանական կական պաշտոնէութիւնն իւր կարեւորութեան հետ կրնայ ունենալ իւր Ֆախիքերն, սակայն Տը-





դարկուեցան, բաց աստի՛ Զմիւռնիոյ եւ Եգիպտականի մէջ հանգանակութիւններ կատարուեցան : Ի Շապին Գարահիսար հրդեհի վայրըն 50,000 զրչ . եւ բաւական ցորեան հասաւ, իր 200 ոսկի կայ գեռ ի սպատառատի եւ կ'սպասւի գաւառներէն ստացաքլրոց փոխարէնն, որովք կ'ապահովէն ոչ միայն հըրկիդեալ ազգայնոց վիճակն այլ եւ հրկիվեալ ազգային հաստատութեանց վերաշինութեան գործն :

Խորհուրդս ի մօտոյ՝ գաւառաց եւ Պօլսոյ հանգանակութեան հաշիւներն ստանալով ընդհանուր հաշուեցոյցը պիտի մասուցանէ Պատկառելի ժողովոյդ :

2. Նմանապէս Պատկ . ժողովոյդ կողմէ կարգեալ Յանձնաժողով մը 45,400 զրչ գումար մը յանձնեց Կառավարական Յանձնաժողովին որ Բարեխնամակայսեր հովանույն ներքեւ կազմուած էր Արտանպէյի հրկիվելոց նպաստ հասուցանելու պաշտօնով, բաց աստի Մայրաքաղաքիս թաղերէն գոհացուցիչ թուով հանդերձնելովն, ճերմոկեղէն եւ այլ զանազան նիւթեր հաւաքելով հասոյց ժամանակին հրդեհու որոնք Խորհուրդն էլեկտրական գործութիւններն, որոց պիտօք ունէր Խորհուրդական կարգի վայրի կամականակութեան գործութիւններն :

Ենորհակալութեան արժանի են նաեւ Ամեն . Տրիեկան Սրբազնի եւ Նորին Սրբազնութեան աջակից Գեր . Տ . Ներսէս Մարդարար Սրբանեանի Շապին Գարահիսարի հանգանակութեան գործոյն մէջ նուիրած ծառայութիւններն :

Այսպէս համառօտ եղանակաւ Խորհուրդս կատարելով իւր համարատուութեան պարտաւորութիւնն, իւր խորին չնորհակալիքը կը յայտնէ Պատկ . ժողովոյդ . որ բարեհածեցաւ առաջին օրէն ընծոյել Խորհուրդոյս ամեն դիւրութիւն եւ հայթայթել այն միջոցներն, որոց պիտօք ունէր Խորհուրդակարենալ գործելու համար :

Մնամք որդիական յարդանօք  
Ի Դիմաց Տնտեսական Խորհրդու  
Խ . Տ . Քենթագեւսն

## ՅՈՒՅԱԿ ԽՆԴՐՈՑ

- 1 Ամասիոյ Սիմեածի գիւղի կալուածական եւ հաշուոց խնդիր . Կարգադրուած
- 2 Ակնայ վիճակին ազգային կալուածները . »
- 3 Ատանայի Եկեղեցւոյ սեպհական ջրաղացքի վաճառումն . Քննութեան մէջ
- 4 Բերայ այրի Երիցականանց վագֆի խնդիր . Աւարտեալ
- 5 Բարերդի Կապան-Մատէն Եկեղեցւոյ գոյից ցուցակը . »
- 6 Գուրուչչմէի Եկեղեցւոյ անօթոց խնդիր . »
- 7 Գումարէարուի գրսի Եկեղեցւոյ պարաւոց խնդիր . Կարգադրուած
- 8 Գումարէարուի գրսի Եկեղեցւոյ ամանակութեան մասին . Յանդաւած
- 9 Գասմիհաշայի Եկեղեցւոյ գոյից խնդիր . Յանդաւած
- 10 Գնալը կղզիի կալուածական նորոգութիւնը . Յանդաւած
- 11 Գումարէարուի գրսի Թաղ . Խորհուրդոյ անկանոն վարմունքը . Արտօնեալ
- 12 Բազէշի Յարդգող գիւղի Եկեղեցւոյ շինութիւնը . Որոշեալ
- 13 Գանձանակաց կանոնաւորութիւնը . Քննութեան մէջ
- 14 Արագիիրի Գուրչնա գիւղի ապօրինի հանգանակութիւնը . Ղրկուած
- 15 Զէյթունի հրկիվելոց ի նպաստ Բագուէն հասած գրամը . Քննուած
- 16 Ազիզի գիւղի հանգանակութեան հաշիւը . Արտօնուած
- 17 Սեբաստիոյ Վարժարանաց շինութիւնը եւ հանգանակութիւնը . Ի քննութեան
- 18 Պալատու Թաղ . Խորհուրդոյ հանդ . ապօրինի ձեռնարկը . Արտօնեալ
- 19 Բալուի Մըջուն Մէզրէի Եկեղեցւոյ շինութեան խնդիր . Վերջացեալ
- 20 Մըջ Խասպիւղի հանգանակութեան խնդիր . Արտօնեալ
- 21 Կեսարիոյ Զօմագլը գիւղի Եկեղեցւոյ շին . Արտօնեալ
- 22 Բալուի Դաւթի Մըջո գիւղի Եկեղեցւոյ շին . »
- 23 Նալը Խանի Եկեղեցւոյ շինութիւնն եւ . »
- 24 Ահեօլու Պուրկազի Եկեղեցւոյ շին . Եւ հանգանակութիւնը . Ի քննութեան
- 25 Կէտիկ Փաշայի Թաղ . Խորհուրդոյ ապօրինի հանդ . ձեռնարկը . Արտօնեալ
- 26 Սեբաստիոյ Ղալու գիւղի հանգանակութիւնը . »
- 27 Սիվիիկի Օտոռու գիւղի Եկեղեցւոյ շին . Եւ հանգանակութիւնը . »
- 28 Ինէպօլուի մէջ Եկեղեցի մը շինելու խնդիր . »
- 29 Բալուի Քաղցրահայեաց Վանաց շին . »
- 30 » Նէլ գիւղի Եկեղեցւոյ » . »
- 31 Երգնկայի Եկեղեցւոյ վաճառեալ պատկերաց խնդիր . Կարգադրուած
- 32 Գաւառական խնդիրները . »
- 33 » Գաւառական խնդիրները . »
- 34 Էյուպի Ս . Եղիայ Թաղային խնդիրները . »
- 35 Տիվիիկի Արմութաշ Գիւղի Ընկ . գրամը . Ի քննութեան
- 36 Ֆէրի գիւղի Ուսումն . Ընկ . հաշուոց խնդիրն . »
- 37 Մամաթիոյ Դպրաց Ընկ . » . »
- 38 Վանայ Արտամէտի Ընկ . » . »

- 39 Գարակէօմրիւկի խափանեալ Ընկ . գոյքը .—  
 40 Ազգային զանազան Ընկ . դրամը .—  
 41 Խուլթիկ գիւղի Ընկերութիւնը եւ դրամը .—  
 42 Մանձըսն գիւղի խափ . »  
 43 Ենի Գարուի Դպրաց Ընկերութեան վարմունքը .—  
 44 Վանայ Սանդիտեան վարժարանը .—  
 45 Պէյքողի , Ալէնեայի , Այիստէֆանոյի , Ալէմոտողիի Թաղ . Խորհրդոց  
զանցառութիւնը հաշուց մասին .—  
 46 Ժառանգական խնդիրներ 23 .—  
 47 Իւսկիւտազու գերեզմանատան շըմապատը .—  
 48 Լիմ եւ Կտուց Անապատաց կալուածական խնդիրը .—  
 49 Խասդիւղի Շահնաղարեան վարժարանի .»  
 50 » Ներախեան վարժարանը .—  
 51 Ծննդոց եւ վախճանմանց ծանուցագրոց գործածութիւնն .—  
 52 Կէտիկ փաշայի թաղի Գատրկա Լիմանիի խնդիրը .—  
 53 Կեսարից Թավլուսըն գիւղի Եկեղեցւոյ դրամը .—  
 54 Կարմոյ Կարմիր Վանուց Նախ . Հոգաբարձութեան հաշիսն .—  
 55 Կիւղէլուէրէի Եկեղեցւոյ դրամոց խնդիրն .—  
 56 Կոռակային խնդիրը .— Գուրտեանի  
 57 Եազնեան ընտանեաց .—  
 58 Պէզճեան Ամիրայի .—  
 59 Ալէմոտողի Տ. Յարութիւնեան .—  
 60 Սափրիչ Խաչիկի .—  
 61 Գայեանէ Արսէնեանի .—  
 62 Եւդոկացի Փափազեան Յակորի .—  
 63 Տուրկուանեան .—  
 64 Էջմիածնայ Կտակեալ կրողակը .—  
 65 Մարիձա Վարդանեանի .—  
 66 Հիսարու Եկեղեցւոյ պարտուց խնդիրը .—  
 67 Հիւանդանոցի պահանջըը զանազան հաստատութիւններէ  
 68 Հերէքթի Եկեղեցին ու գոյքն .—  
 69 Հիսարու Թաղ . Խորհրդոյ ապօրինի վարմունքը .—  
 70 Ճիզիէ Վագֆի խնդիրն .—  
 71 Մշց Ա. Կարապետի Վանուց հողային խնդիրը .—  
 72 » Ա. Առաքելոց » հաշուական խնդիրը .—  
 73 Մարզուանի վանօրէից » »  
 74 Մակաբայեցւոց Վանուց » »  
 75 Գաւառ . Մուգաթայի 12 խնդիրներ  
 76 Նարլը Գարուի Եկեղացական պահանջըը Թօղաթէ .—  
 77 » » արծաթեղինաց վաճառումն .—  
 78 Շահնեան Մկրտչի թագման ծախուց խնդիր .—  
 79 Զնքուշի Վանքէն վերցուած դրամոց խնդիր .—  
 80 Պատրիարքարանի հին արոց գանձման խնդիրը .—

## Մասամբ կրգութեալ .

- »  
 »  
 »  
 »  
 Ի Քննութեան  
 Ի բացարութեան  
 Շինութեան մէջ  
 Ի բացարութեան  
 Մասամբ լուծեալ  
 Շինութեան մէջ  
 Ի քննութեան  
 Անորաշ վիճակի մէջ  
 Ի քննութեան  
 Անհրաժեշտ  
 Ի ձեռին  
 Կարգադրուած  
 Ի քննութեան  
 »  
 Որոշեալ  
 Որոշման մէջ  
 »  
 Բանակցութեան մէջ  
 »  
 Վերջացած  
 Յղուած  
 »  
 Ի քննութեան  
 Վերջացած  
 Կարգադրուած  
 »  
 »  
 Կարգադրուած  
 »  
 »  
 »  
 Ի բանակցութեան  
 »  
 Յղուած  
 Արտօնեալ  
 Ի բանակցութեան  
 Աւարտած  
 Յղուած

- 81 Պատրիարքարանի կատկածելի պարտուց եւ պահանջից խնդիրը Յղուած  
 82 » Ելմացոյցը .— Ի գործադրութեան  
 83 Պատրիարքարանի նորոգման խնդիրը .— Ի կարգադրութեան  
 84 Պատրիարքարանի հասից եւ ծախուց խնդիրը .— »  
 85 « վկայագրոց վաւերացման սակացոյցը .— Անորոշ  
 86 Սամթ . Մէշրութէ պարտէղի խնդիրը .— Որոշուած  
 87 » Նոր թաղի Թաղ . Խորհրդոյ դէմ ամբաստանութիւն .— Վերջացած եւ ի նորոյ ծագումն առած  
 88 Վանայ Աւանց եւ Խորդոյ գիւղի Ազգ . դրամը .— Ի քննութեան  
 89 Քանչէլէրի խնդիրներ 8 թաղերու .— Յղուած  
 90 Ֆէրի-գիւղի թաղային գործերը .— Կարգադրուած



## ՏԵՂԵԿԱԳԻՐ

# ԵԼՄՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ

ԱԶԳԱՑԻՆ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Բարձրաշնորհ Սրբազնն Պատրիարք Հայոց  
Նախագահ Աղքային Պատկ. Վարչութեան Քաղաքական Ժողովոյ

Հստ որոշման Աղքային Կեդրոնական  
Վարչութեան Քաղաքական Ժողովոյ՝ Ելմուտ  
կան Տեսչութիւնս կը փութայ Կեդրոնական  
մնառուկի 1885-86 և 1886-87 տարիներու  
ելեւմոլից հաշուեցոյցերը մատուցանել Զեր  
Բարձր Սրբազնութեան:

Ելմուտական Տեսչութիւնս կարեւոր հա-  
մարեց երկամեայ հաշուեցուցակաց Ծոր-  
դել նախընթաց հինգ տարիներու Ելմուտական  
գործողութիւններն, որպէս զի կարելի ինի  
գիւրաւ ըմբռնել թէ՝ ի՞նչ է ներկայ վիճակն  
անցելոյն հետ բաղդատամամբ:

Ինչպէս Զեր Բարձր Սրբազնութիւնը վե-  
րահսու պիտի լինի ներկայացեալ հաշուե-  
ցոյցերէն թէ՝

### ՄՈՒՏԲ

1. Ազգային ուղղակի տուրքը՝ Կեդրոնական մնառուկի Ելմուտայցի սահմանած 200,000 դր. քանակութեան դէմ՝ 1886-87 տարւոյ մէջ 160,000 դր. և 1885-86 տար-  
ւոյ մէջ 141,525 դր. գանձում տեղի ունեցած է. իսկ նախընթաց հինգ տարիներու միջին հաշուով այդ միւզն արտադրած է տարեկան իր 422,361 դր. Այս հասոյթն

յուսակի էր Ելմուտայցի նշանակած՝ գումա-  
րին հաւասարիլ, եթէ մէկ կողմէ սոյն տրոց  
կանոնագրին գործադրութեան դեռ նոր  
սկսուած լինելն, եւ միւս կողմէ Մայրա-  
քաղաքիս դրամական անյաջող վիճակն ար-  
գելք չ'ինէին:

2. Գուտառական մրւգարան՝ Ընդդէմ Ել-  
մուտայցի սահմանած 410,930 դր. քանա-  
կութեան, 1886-87 տարւոյ մէջ 91,486 դր.  
և 1885-86 տարւոյ մէջ 45,158 · 87½ ար-  
տադրած է. իսկ նախընթաց հինգ տարի-  
ներու միջին հաշիւն է 10,225 դր. տարե-  
կան:

3. Թաղային բանվելքն՝ Ընդդէմ Ելմու-  
տայցի 28,700 դր. քանակութեան, 1886-  
87 տարւոյ մէջ գոյացած է 38,600 դր. եւ  
1885-86ին 28,620 դր. իսկ նախընթաց հինգ  
տարիներու միջին հաշիւն է տարին 20,656  
դր.

4. Առուծախի վկայագրին հասոյքը՝ քը-  
ւէարկեալ 70,000 դր. քանակութեան դէմ՝  
1886-67 տարւոյ մէջ գոյացած է 95,960 դր.

եւ 1885-86ին 86,770 դր. 1886-87 տարւոյ մէջ Ելմոտացոյցի սահմանած գումարէն 25,960 դր. առաւելութեամբ. իսկ նախընթաց հինգ տարիներու միջին հաշիւն է իրը 82,396 դր. տարեկան:

5. Նշանաւորեան հասոյքն՝ ընդդէմ Ելմոտացոյցի սահմանած 70,000 դր. քանակութեան, 1886-87 տարւոյ մէջ 67,172<sup>1/2</sup> դր. եւ 1885-86ին 69,065 դր. գոյացած է. իսկ հինգ տարիներու միջին հաշիւն է իրը 82,436 դր. ինչպէս կը տեսնուի, այս հատոյթն հետզհետէ նուռազելու վրայ է, գըլխառարար սա պատճառաւ թէ՝ ամուսնացելոց թիւն երթալով կը նուռազի, բայ ասոնի նշանելոց եւ ամուսնացելոց ամենամեծ մասը ժողովրդեան աղքատ մասը կը կազմեն, եւ ամուսնութեանց եօթն տարուան վիճակագըրութենէն կը աենուի որ 1880էն մինչեւ 1885 հինգ տարւոյ միջոցին, միջին հաշուով տարին 16 ձրի նշանաւորեթիւն կատարուած, իսկ վերջին տարւոյ մէջ 56ի հասած է ձրի նշանելոց թիւն. զոր օրինակ 1884-85ին 476 նըշանելոց մէջ 20, իսկ վերջին տարւոյ մէջ 450 էն 56ը ձրի կատարուած է:

6. Հրամանիր հասոյլն միշտ միեւնոյն վիճակի մէջ գտնուած է, փոքր ինչ նուռազ տարբերութեամբ մը:

7. Ճամբորդաց անցազիր հասոյքն՝ որ ամբողջովին Ազգային Հիւանդանոյցի սնտուկին նախառ սահմանուած է, ընդդէմ Ելմոտացոյցի սահմանած 50,000 դր. քանակութեան, 1886-87 տարւոյ մէջ 71,232 դր. եւ 1885-86ին 68,662 դր. արտագրած է, իսկ նախընթաց հինգ տարիներու միջին հաշիւն է 25,105 դր. Այս հասոյթը հետզհետէ առաւելութեան մէջ է:

8. Թէ՛ դիւանական դատական եւ թէ՛ կոնդականի հասոյթներն 1886-87ին 45,595 դր. արտագրած են:

9. Պաշտօնարաւդը անուն հասոյթն. ընդդէմ Ելմոտացոյցի սահմանած 1,500 դր. քանակութեան, 1886-87 տարւոյ մէջ 1,150 դր. եւ 1885-86ին 1,250 դր. գոյացած է:

10. Զանազան հասոյթն 1886-87 տարւոյ մէջ 44,264 դր. եւ 1885-86ին 45,934 դր. արտագրած է, ընդդէմ Ելմոտացոյցի սահմանած 5,000 դր. քանակութեան:

ԵԼՔ

1. Պատրիարքական բաշակ. — Բառ Ելմոտացոյցի սահմանեալ դումարն է 6000 դր. իսկ 1886-87 տարւոյ մէջ 63,987 դր. վճարեալ կը տեսնուի: Ամեն. Ա. Պատրիարք Հօր 1885 Մարտ ամայ 155ն մինչեւ 1886 Ապրիլ 30 բանած -67,500-դր. ամսականաց փոխարէն նոյն շրջանին մէջ 63,987 դր. վճարուած եւ մնացորդը յաջորդ շրջանին մէջ հատուցուելով այս պատճառաւ յառաջ եկած է 3,987 դր. առաւելութեան տարբերութիւնը:

2. Պաշտօնարաւդը բաշակ. — Բառ Ելմոտացոյցի Պատրիարքարանի պաշտօնէութեան յատկացեալ է 241,800 դր. 1886-87 տարւոյ մէջ վճարեալ է թէեւ 231,566 դր. սակայն սոյն գումարին 2684.50 դրուշ հին պարտուց համար վճարեալ լինելով նոյն տարւոյն պաշտօնէից թոշակին ճիշդ գումարն կը լինի 228,981.50 դրուշ. իսկ նախորդ հինգ տարիներու համեմատական հաշիւն է իրը 189,320 դրուշ: Թէպէտ եւ 1886-87 տարւոյ մէջ նախորդ տարիներէն աւելի քանակութեամբ վճարում կատարուած է, սակայն պաշտօնէից ամսաթոշակը բաղդամամբ ներկայ տարւոյ աշխատութեանց, նըւազ է քան աւելի. այսու հանդերձ ձեռք առնուած ինայուղութեամբ Ելմոտացոյցի նշանակած գումարէն 11,818.50 դր. նուռազ քանակութեամբ տեղի ունեցած է, որոյ մէջ է նաեւ ի վերջէ յաւելեալ երկու բարապանաց թոշակին, որ Ելմոտացոյցին մէջ «Հաւաքչաց ամսական» անուամբ առանձինն նշանակուած էր:

3. Ճամբորդաց անցազիր եւ նշանաւորեան նախայք. — Որ նպաստ կը տրուին Ազգ. Հիւանդանոցին, քուէարկեալ 85,000 դր. ին դէմ, 1886-87ին 406,052<sup>3/4</sup> դր. եւ 1885-86ին 100,160<sup>3/4</sup> դր. իսկ նախընթաց հինգ տարիներու համեմատական հաշիւն է իրը 57,979 դր.:

4. Նպաստի ամսականել. — Ընդդէմ քըւէարկեալ 12,000 դր. քանակութեան, 1886-87ին 5,400 դր. եւ 1885-86ին 8605 դր. ըսել է միշտ նուռազ քանակութեամբ տեղի ունեցած է:

5. Նպաստ կարօւելոց. — Քուէարկեալ 4,000 դրէն դէմ՝ 1886-87ին 6,821 դր. եւ 1885-86ին 4,642 դր. իսկ նախընթաց հինգ տարիներու համեմատական հաշիւն է 6,650 դր. պարագայից թերմամբ ամեն տարի շարունակաբար քուէարկեալ գումարէն աւելի քանակութեամբ վճարուած է հարկ եղած ժամանակ:

6. Ազգային ժաղով. — Քուէարկեած է 25,000 դրուշ տարեկան. 1886-87ին 20936<sup>1/2</sup> դրուշ եւ 1885-86ին 16,130 դրուշ վճարեալ է ըստ պիտոյից, հարկ եղած ժամանակ:

10. Հոփուական. — Այս ծափաքն նմանապէս թէեւ Ելմոտացոյցի գումարէն շատ նուազ, սակայն նախորդ տարիներէ աւելի քանակութեամբ վճարուած է 1886-87 վերջին տարւոյ մէջ, երբ պէտքն երեւան եկած է:

11. Կրրական. — Նոյնպէս թէեւ կատարուած վճարունք Ելմոտացոյցի սահմանած գումարէն նուազ, սակայն 1886-87 տարւոյ մէջ նախորդ տարիներէ շատ աւելի քանակութեամբ վճարուած է հարկ եղած ժամանակ:

12. Նշանի խաչ եւ ընդ նմին սծուխ, փայտ, սուրբ եւ շամար. — Այս ծափաքը քուէարկեալ գումարէն միշտ նուռազ քանակութեամբ ունեցած են:

13. Հանդերձագին բարապանաց. — 1886-87 թուականին՝ Ելմոտացոյցի գումարէն 4,000 դրուշ առաւելութեամբ կատարուած է այս ծափաքն եւ աս՝ յառաջ եկած է ազգային տրոց հաւաքման աղաքաւ երկու բարապանաց յաւելընան եւ նոյն շրջանի մէջ տեղի ունեցած սենեկապանաց ումանց փոփոխման պատճառաւ:

14. Զանազան եւ պատահական ծախմերն. — Ելմոտացոյցի սահմանած գումարէն նուազ քանակութեամբ աւելի տեղի գտած են:

15. Հաւաքչաց տարանորդ. — Ընդդէմ 19,200 դրուշ քուէարկեալ գումարին՝ 1886-87ին 8,688<sup>1/2</sup> դրուշ վճարուած թէեւ, սակայն այժմ այս գլուխը բարձուած եւ պաշտօնէից գլամոյն լժորդուած է՝ որոց հաւաքման գործն բարապան պաշտօնէից յանձնած լինելուն պատճառաւ:



Այս տեղեկութիւններն ուրոյն ուրոյն ի-  
րենց ծանօթութիւններով եւ բացարու-  
թիւններով տեղեկագրել՝ գոնէ երեք ամսոյ  
կարօս գործ մ' ըլլալով՝ մասսմի մի իրա-  
ւունք կունենայ Հոգաբարձութիւնս այս  
մասին արժանանալ Ձեր Հայրական ներողու-  
